

**ՍԻՐԻԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԻՃԱԿԸ
(2011-2017թթ.)**

Ավելի քան վեց տարի առաջ՝ 2011թ.-ի մարտի 15-ին սկիզբ առած սիրիական ներքաղաքական ճգնաժամն արագորեն ռազմական բնույթ ստացավ և աստիճանաբար վերածվեց ահեղ եղբայրասպան պատերազմի, որը իսկեղ շուրջ կես միլիոն մարդու կյանք, որոնցից շուրջ 55 հազարը երեխաներ են: Ըստ եղած տվյալների, ավելի քան 15.5 մլն. սիրիացի ունի մարդասիական օգնության կարիք (երկրի բնակչության 75%-ը): Շուրջ 6 մլնը ապրում է պատերազմական տարատեսակ գործողությունների անմիջական վտանգի գոտիներում: Սիրիացիների 85%-ը հայտնվել է աղքատության շեմից ցած, շուրջ 7 մլն. մարդ ունի սննդի պակաս: Շուրջ 6.3 մլն. համարվում է ներքին տեղահանված: Պաշտոնական տվյալներով, հարևան երկրներում գրանցված է 5.1 մլն. սիրիացի փախստական (բնակչության մոտ 23%-ը):

Պատերազմի վեց տարիների ընթացքում երկիրը կրեց տնտեսական ահռելի վնասներ: Ըստ Համաշխարհային Բանկի տվյալների, պատերազմի պատճառով Սիրիայի տնտեսական կորուստները կազմել են 226 մլրդ ԱՄՆ դոլար: Ավիրվել է երկրի բնակարանային ֆինդի շուրջ 21%-ը: Տարեկան Սիրիայում աշխատատեղերի քանակը կրճատվում է ավելի քան 500 հազարով: Գործազրկությունը երիտասարդության շրջանում հասել է 78 %-ի:

Ցավով պետք է արձանագրել, որ Սիրիայում ծավալվող ռազմաքաղաքական դաժան զարգացումները չըրջանցեցին սիրիահայ երբեմնի բարգավաճ համայնքին՝ պատճառելով մարդկային անդառնալի կորուստներ և նյութական մեծ վնասներ:

Մինչև 2011թ. Սիրիայում բնակվում էր ավելի քան 100 հազար հայ, հիմնականում՝ Հալեպում, Դամասկոսում, Դեյր Ջորում, Հասաբեում, Ռակկայում, Հոմսում, ինչպես նաև Լաթաքիայում, Քեսաբում և այլ շրջաններում: Պատերազմական պայմանների և ավերածությունների հետևանքով, հատկապես 2012թ.-ից, սկիզբ առավ հայերի արտագաղթը դեպի հարևան Լիբանան, Հայաստան և արևմտյան երկրներ, ապա՝ Կանադա, ԱՄՆ, Ավստրալիա և այլն: Իսկ երկրում մնացածները հայտնվեցին սոցիալական ծանր կացության մեջ՝ շատերը զրկվելով ապրուստի տարրական միջոցներից:

Համաձայն ոչ պաշտոնական տվյալների, ավելի քան հարյուր հազարանոց համայնքի շուրջ 70 տոկոսն արդեն հեռացել է երկրից՝ ժամանակավոր կամ մշտական բնակության:

Բացի տնտեսական անգնահատելի կորուստներից, սիրիահայությունը տվել է ավելի քան 225 զոհ, այդ թվում՝ կանայք և երեխաներ, հարյուրավոր վիրավորներ, հաշմանդամներ: Համայնքն ականատեսն ու վկան եղավ տասնամյակներ շարունակ սեփական բազուկներով և բազում զոհողությունների գնով կառուցված

շինությունների, դպրոցների, եկեղեցիների, մշակութային օջախների, գերեզմանոցների ավերածությունների:

2012թ. հուլիսից առավել անասելի դաժան գրկանքներ կրեց մանավանդ մայր գաղութը՝ Հալեպը: Ակամայից հայտնվելով ռազմատենչ ծայրահեղական զինյալ հրոսակախմբերի գործողությունների կիզակետում՝ հալեպահայությունը հարկադրված եղավ սեփական ուժերով ինքնապաշտպանվել, ապրել իր նորագույն պատմության ամենադժնդակ ժամանակաշրջանը՝ գրկվելով ապրուստի ամենատարրական միջոցներից և տալով 167 զոհ, որոնցից 35 զինծառայողներ: Զինյալ ահաբեկչական խմբավորումների կողմից առևանգվեց 109 հալեպահայ, որոնցից 103-ը ազատ են արձակվել փրկագնի դիմաց, իսկ 7-ը մինչ օրս համարվում են անհայտ կորած:

Ռազմական գործողությունների ընթացքում գրեթե հիմնահատակ ավիրվել են հայաբնակ Նոր Գյուղ-Մեյդան թաղամասի բնակֆոնդը՝ շուրջ հազար բնակարան: Վնասված են «Միս», «Կիլիկիա», «Օշական», «Արցախ», և «Նաիրի» ազգային բնակարանային համալիրները: Նախկինում գործող 17 եկեղեցիներից ներկայումս մնացել են 7-ը: Ամբողջովին այրվել է նաև Ս. Գրիգոր եկեղեցին և Քառասնից Մանկանց առաջնորդանիստ եկեղեցու հարակից շինությունները:

Վնասվել են Հալեպում գործող 11 վարժարան և դպրոց: Հիմնովին քանդվել է Մեսրոպյան վարժարանը: Ռազմական գործողություններից զգալի վնասներ կրած Կարեն Եփփե ճեմարանը վերջերս է վերանորոգվել: 2017 թ. սեպտեմբերի 11-ին տեղի է ունեցել ճեմարանի վերաբացման արարողությունը:

Թալանվել և ավերածությունների են ենթարկվել հայությանը պատկանող բազմաթիվ խանութներ, ֆաբրիկաներ և գործարաններ՝ հիմնականում քաղաքի Ռամուսե, Շեյխ Նաջջար, Արկուբ, ինչպես նաև հայաբնակ Նոր Գյուղ շրջանում (մոտ 1000 գործատեղի): Պատերազմի հետևանքով անցած տարիների ընթացքում Հալեպը ստիպված լքեց հայ բնակչության երկու երրորդը:

Միրիական ճգնաժամի տարիներին մեծ կորուստներ, այն թվում մարդկային, կրել է նաև Դամասկոսի հայ համայնքը: Ըստ մեր ունեցած տվյալների, Դամասկոսում, զոհվել է 22 մարդ: Ռազմական գործողությունները համայնքին նյութական մեծ վնասներ են պատճառել: Հայերին պատկանող բազմաթիվ գործարանների, պահեստների զգալի մասը թալանվել կամ լուրջ ավերածությունների է ենթարկվել, իսկ մի մասն էլ՝ շարունակում է գտնվել հրոսակախմբերի տիրապետության տակ: Դամասկոսում հայկական միացյալ նորաբաց համալիրը, որն ընդգրկում էր կրթական, մշակութային և ժամանցային հաստատություններ, կրել է ավելի քան 1 մլն. ԱՄՆ դոլարի վնաս: Պայթյունի հետևանքով վնասվել է Թեքեյան մշակութային կենտրոնը, իսկ քաղաքի Բար Թումա թաղամասում գտնվող Դամասկոսի Հայ

Առաքելական և Հայ Կաթողիկե առաջնորդարաններն ու կից գոծող դպրոցները պարբերաբար հրթիռակոծվել են՝ կրելով մասնակի ավերածություններ: Հակամարտության պատճառով դամասկահայերի գրեթե կեսը հեռացել է երկրից: Ըստ եղած տեղեկությունների՝ այժմ Դամասկոսում բնակվում է շուրջ 4 հազար մարդ:

Ցավով պետք է նշել, որ գրեթե ամբողջովին հայաթափվեցին Դեր Զոր և Ռակկա նահանգները: 2014թ.-ի սեպտեմբերի 21-ին՝ ՀՀ Անկախության օրը, ԻՊ ահաբեկչական կազմակերպության հրոսակները պայթեցրեցին Դեր Զորի Սուրբ Նահատական եկեղեցին: Այս և հայկական այլ թաղերի ոմբակոծությունների ու ահաբեկչական գործողությունների առիթներով Հայաստանը պաշտոնապես հանդես է եկել դատապարտող հայտարարություններով:

Ռազմաքաղաքական իրավիճակի սաստկացման պատճառով Դեր Զորում փակվեց ՀՀ Պատվո հյուպատոսությունը: Ս.թ. սեպտեմբերի սկզբին սիրիական բանակը ձեղքեց Դեր Զորի շրջափակումը: Տեղեկություններ կան, որ արդեն ազատագրված է հայկական գերեզմանոցը և հայկական եկեղեցին:

2014թ.-ից ԻՊ սպառնալիքների հետևանքով, հայությունը սկսեց լքել Թել Արմանը, Դերիքը և այլ բնակավայրերը: Հասաքե նահանգում զինյալների վերահսկողության տակ հայտնված «Մարկադեն» և նրան կից մատուռը ևս ավիրվեցին: Իսկ Ռաս ուլ-Այն քաղաքի եկեղեցին ավերածություններից հետո այժմ վերականգնվել է:

Հասաքե քաղաքում մասնակի կամ ամբողջությամբ ավիրվել են հայերին պատկանող որոշ տներ և գործատեղեր: Ունեցած տվյալների համաձայն, Հասաքեում գոհվել է 5 մարդ, կան անհայտ կորածներ: Իսկ Կամշլիում հայերը տվել են առնվազն 12 զոհ: Թեժ մարտերի պատճառով Հասաքե նահանգից հայերի մեծ արտահոսք է կատարվել: Ոչ ճշգրիտ տվյալների համաձայն, նահանգում, ներառյալ Կամիշլի քաղաքում, այժմ բնակվում է 5000-5500 հայ:

Ի տարբերություն Դեյր Զորի և Հասաքեի, Ռակկայի նահանգի, հայ ազգաբնակչության արտահոսքը սկսվել էր դեռևս պատերազմից առաջ: Ռակկա քաղաքում ԻՊ-ի վերահսկողության տակ անցնելուց առաջ բնակվում էին մի քանի հայ ընտանիքներ: Ըստ եղած տեղեկությունների՝ Ռակկայի Հայ Կաթողիկե եկեղեցին ամբողջությամբ ավիրվել է, իսկ Հայ Առաքելական եկեղեցին զինյալների կողմից վերածվել է մզկիթի:

Ռազմական գործողությունների պատճառով Հոմս քաղաքից հարկադրված հեռացան փոքրաթիվ հայ ընտանիքներ, հաստատվելով սիրիական ափամերձ շրջաններում: Զինյալների տիրապետության տակ անցան ազգային Սահակյան վարժարանն ու Սուրբ Մեսրոպ հայ առաքելական եկեղեցին: Ըստ Դամասկոսի Հայոց

առաջնորդարանի, հայկական այդ երկու կառույցները մասնակի ավերածությունների են ենթարկվել:

Միրիական հակամարտության ընթացքում համեմատաբար ավելի անվտանգ էին երկրի առափնյա շրջանները՝ Տարտուսը, Բանիանը, Լաթաքիան, Քեսաբը և այլն: Հալեպից, արևելյան նահանգներից և հակամարտության այլ գոտիներից հայությունը ժամանակավոր բնակություն է հաստատել ծովեզերքի հիշյալ վայրերում, ինչի արդյունքում այդտեղ գրեթե կրկնապատկվել է հայ ազգաբնակչության թիվը, հասնելով, ոչ ճշգրիտ տվյալների համաձայն՝ 8 հազարի:

Ճգնաժամի սկզբից Քեսաբ տեղափոխվեցին Միրիայի տարբեր շրջաններից մոտ 120 հայ ընտանիքներ՝ Յակուբիեից, Ռակկայից, Դեր Ջորից և Հալեպից: Սակայն 2014թ.-ի մարտի 21-ին Քեսաբը՝ զինյալ խմբավորումների կողմից հարձակման ենթարկելուց հետո, շրջանն ամբողջությամբ հայաթափվեց. տեղի բնակչությունն ու ներգաղթյալները ապաստանեցին Լաթաքիայում: Քեսաբը ազատագրելուց հետո, նույն թվականի հունիսի 15-ին, որոշ մարդիկ նախընտրեցին չվերադառնալ և մնալ Լաթաքիայում, կամ տեղափոխվեցին այլ շրջաններ: Տեղական կառույցների ոչ պաշտոնական տվյալներով, Քեսաբը պատերազմի տարիներին լքել են 200 հայեր: Այժմ Քեսաբում ապրում է ավելի քան 1100 մարդ, որոնցից շուրջ 100-ը այլ շրջաններից են:

Զինյալների կողմից թալանվեցին Քեսաբի և հարակից գյուղերի գրեթե բոլոր տները, խանութները, գործատեղիները և այլն: Հայ Առաքելական և Կաթողիկե եկեղեցիները մասամբ այրվել էին, իսկ Հայ Ավետարանական եկեղեցին և կից գործող մշակութային կենտրոնն ամբողջությամբ հրկիզվել էին: Վերջերս Ավետարանական եկեղեցին վերակառուցվեց և արդեն գործում է:

Հակամարտության ընթացքում հայաթափվեցին հայկական Ղնեմիե և Յակուբիե գյուղերը, որոնց բնակիչներն, ինչպես նշվեց, հաստատվեցին Քեսաբում: Հայկական պատմական այս գյուղերի եկեղեցիները կիսաքանդ վիճակում են, իսկ Յակուբիեի գերեզմանատունն ամբողջությամբ ավերածության է ենթարկված: Վերջերս Ղնեմիեի եկեղեցու խաչը վերածվեց:

Պատերազմի տարիների ընթացքում Հայաստանը մշտապես նյութական և բարոյական աջակցություն է ցուցաբերել սիրիահայ համայնքին՝ փորձելով մեղմացնել պատերազմից կրած դժվարությունների բեռը: Հայաստանն պատերազմի սկզբից մինչև օրս ընդունել է շուրջ 22 հազար սիրիահայի: Հայաստան տեղափոխված հայերին աջակցություն է տրամադրվում կրթության և առողջապահության ոլորտներում: Միրիահայությանը աջակցելու նպատակով, 2013թ.-ի հունվարին ստեղծվել է սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով: Այս կապակցությամբ հարկ է առանձնահատուկ ընդգծել, որ ի դեմս ՀՀ

նախագահի, ՀՀ սփյուռքի նախարարության և ՀՀ կառավարության այլ գերատեսչությունների, Հայաստանն անում է հնարավոր ամեն բան ոչ միայն Սիրիայում հայությանն օգնելու, այլև՝ հայրենիքում բնակություն հաստատած մեր հայրենակիցներին փախստականի կարգավիճակում չզգալու համար:

Ինչպես հայտնի է, Սիրիայում ՀՀ դեսպանությունը և Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոսությունը, անգամ ամենածանր օրերին, շարունակեցին իրենց գործունեությունը՝ հնարավորինս օգտակար լինելով սիրիահայությանը: Առաջնորդվելով ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով (2 նոյեմբերի 2012թ. N 1469-Ն և 26 հուլիսի 2012թ. N 951-Ն) դեսպանության և գլխավոր հյուպատոսության կողմից պարզեցված կարգով ընդունվել և ընդունվում են ՀՀ քաղաքացիության հազարավոր դիմումներ, ինչպես նաև տեղում անվճար տրվում են ՀՀ քաղաքացու անձնագրեր: Անցած տարիներին Սիրիայում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները մշտական կապի մեջ են գտնվել համայնքային հոգևոր և աշխարհիկ առաջնորդների հետ, համագործակցել համայնքնային կառույցների և ակումբների հետ:

2012թ.-ին՝ «Օգնիր եղբորդ» նախաձեռնության շրջանակներում, երկու օդանավ մարդասիրական օգնություն է ուղարկվել հալեպահայությանը: 2016թ.-ի հոկտեմբերի և 2017թ.-ի հունիսի մինչև ընկած ժամանակահատվածում ՀՀ նախագահի հանձնարարությամբ և ՌԴ պաշտպանության նախարարության հետ փոխգործակցությամբ, ռուսական օդանավերով Հայաստանից Սիրիա է ուղարկվել շուրջ 120 տոննա մարդասիրական օգնություն, որը բաժանվել է Դամասկոսի, Հալեպի, Լաթաքիայի, Քեսաբի կարիքավոր ընտանիքներին:

Բացի այդ, 2013թ.-ից սիրիահայության դպրոցական ծրագրերի իրականացման նպատակով, Հայաստանը կատարել է դրամական խոշոր հատկացումներ: Նման օգնություն ցուցաբերվել է նաև 2014թ. հարձակումից տուժած քեսաբցիներին: ՀՀ Նախագահի անունից Ամանորի կապակցությամբ յուրաքանչյուր տարի դրամական նվիրատվություն է կատարվել Սիրիայի հայկական կրթօջախներին:

Տեղին է շեշտել նաև անցած տարիներին սիրիահայության հոգևոր առաջնորդների, ազգային կառույցների ղեկավարների, շտապօգնության մարմինների և այլոց նվիրական այն ահռելի աշխատանքը ծանր կացության մեջ հայտնված գաղութի կարիքները հոգալու համար: Միաժամանակ, երախտագիտության խոսք պետք է ուղղել սփյուռքի հոգևոր և ազգային բոլոր այն կառույցներին, կազմակերպություններին և բարերարներին՝ սիրիահայությանը նեցուկ կանգնելու և նյութական աջակցություն ցուցաբերելու համար:

Հայության համար առավել ցնցող էր 2016թ.-ի դեկտեմբերին Հալեպ քաղաքի լիակատար ազատագրումը, որը հնարավորություն տվեց ավելի քան 4 տարվա

պաշարումից և ավերածություններից հետո անվտանգ պայմաններում շարունակել կյանքը և ծրագրեր մշակել ազգապատկան ունեցվածքը վերականգնելու ուղղությամբ: Աստիճանաբար պատմական քաղաքը և իր հետ մեկտեղ, Հալեպի հայ համայնքը վերադառնում են խաղաղ բնականոն կյանքին:

2016թ.-ի դեկտեմբերի 30-ից Սիրիայի տարածքում գործում է ռազմական գործողությունների դադարեցման ռեժիմը, որին միացել են ավելի քան 2100 բնակավայրեր:

Հակամարտող կողմերի միջև ընթացող բանակցություններում ևս դրական առաջիակացում է նկատվում: Ս.թ. մայիսի 4-ին Աստանայում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, Սիրիայի տարածքում արդեն գործում է 3 անվտանգության գոտի՝ 1) Հոմսի նահանգի հյուսիսային հատվածներում 2) Դամասկոսի արվարձան Արևելյան Ղուտայում 3) Սիրիայի հարավային որոշ հատվածներում՝ ներառյալ Դարաան և Կունեյտրան: Գոտիներում հրադադարի պահպանման և անվտանգության վերահսկողությունն իրականացվում է ՌԴ ռազմական ոստիկանության ուժերով:

Այս գոտիներին միացավ նաև Իդլիբի նահանգը՝ սեպտեմբերի 15-ին Աստանայում բանակցությունները հովանավորող պետությունների՝ ՌԴ, Իրանի և Թուրքիայի, ինչպես նաև սիրիական հակամարտող կողմերի պատվիրակությունների հերթական հանդիպման ժամանակ: Ենթադրվում է, որ առաջիկա ամիսների ընթացքում ավարտվելու են կառավարական բանակի և չափավոր ընդդիմության միջև ռազմական գործողությունները, որին 2018թ.-ին հաջորդելու է սիրիական կնճիռի քաղաքական կարգավորման գործընթացը:

Այս ամենը հույս է ներշնչում որ տեսանելի ապագայում Սիրիայում կարող է հաստատվել տևական խաղաղություն և հայ համայնքը կփորձի վերականգնել իր երբեմնի հզորությունը: Այսօր համայնքը կանգնած է ազգային և մշակութային դիմագծի պահպանման և վերականգնման հիմնախնդրի առջև:

Սիրիայի հայկական գաղութը միշտ եղել է սփյուռքահայ մշակութային հիմնարար կենտոններից մեկը և որոշ չափով, մշակութային ուղեցույցը: Այժմ համայնքը կանգնած է մշակութային բացարձակ աղքատացման վտանգի առջև:

Ելնելով սիրիահայ գաղութը պահպանելու թե քաղաքական, և թե տնտեսական ու մշակութային անհրաժեշտությունից՝ նրա վերականգնումը պետք է դիտել որպես համազգային առաջնահերթ խնդիր:

Այդ ուղղությամբ հարկավոր է միաբանել Հայոց ողջ ներուժը՝ պատմական համայնքի ցավն ամոքելու և տառապանքը մեղմելու, հոգեկան ու նյութական վիճակի վերականգնումը դարձնելով որպես համահայկական պարտավորություն: Ուստի առաջարկում ենք ձեռնարկել առաջնահերթ հետևյալ միջոցառումները.

- Կազմակերպել ՀՀ սփյուռքի նախարարության ընդլայնված պատվիրակության այցը Սիրիա՝ հայաբնակ շրջաններում իրավիճակին ծանոթանալու նպատակով,
- Ստեղծել մասնագիտացված հանձնաժողով, որը կիրականացնի համակողմանի և համապարփակ ուսումնասիրություն՝ սիրիահայության կրած մարդկային և տնտեսական կորուստները ամփոփելու և կրած վնասների վերականգնման համար ուսումնասիրություն կատարելու և ֆինանսական գնահատականներ տալու նպատակով,
- Ստեղծել սիրիահայության ներդրումային ֆոնդ, որը կաջակցի սիրիահայ մանր ու միջին տնտեսվարողներին վերականգնել պատերազմից տուժած բիզնեսը,
- Ստեղծել խորհրդատվական ծառայություն սիրիահայ ձեռնարկատերերի համար,
- Ստեղծել սիրիահայության հարցերով համահայկական խորհուրդ, որի կազմում ընդգրկել Սիրիայում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարներին, ինչպես նաև համայնքնային առաջնորդներին,
- Ստեղծել հիմնադրամ՝ գոհվածների ընտանիքներին օգնելու համար,
- Տրամադրել լրացուցիչ արտոնություններ և կրթաթոշակներ մշակույթի, արվեստի, ինչպես նաև հայագիտության ոլորտում սովորող սիրիահայ ուսանողների համար:

ՄԱՀ-ում ՀՀ դեսպան Արշակ Փոլադյան

18.09.2017թ.